

iSeq 100 Սեքվենավորման համակարգ

Անվտանգության և համապատասխանության ուղեցույց

Միայն հետազոտության օգտագործման համար: Չօգտագործել ախտորոշիչ գործընթացների համար:

Այս ուղեցույցը պարունակում է Illumina® iSeq™ 100 Սեքվենավորման համակարգի տեղադրմանը, սպասարկմանը և գործարկմանը վերաբերող անվտանգության կարևոր տեղեկություններ: Այս ուղեցույցը պարունակում է արտադրանքի համապատասխանության և կարգավորիչ հայտարարություններ: Ընթերցեք այս տեղեկությունները, նախքան համակարգում որևէ գործողություն ձեռնարկելը:

Համակարգի արտադրման երկիրը և ամսաթիվը տպված են գործիքի պիտակի վրա:

Անվտանգության նկատառումներ և նշումներ

Այս բաժինը սահմանում է հնարավոր վտանգները, որոնք վերաբերվում են այս գործիքի տեղադրմանը, սպասարկմանը և շահագործմանը: Մի շահագործեք կամ օգտվեք գործիքից այնպիսի եղանակով, որը կարող է առաջացնել հետևյալ վտանգներից որևէ մեկը:

Անվտանգության ընդհանուր զգուշացումներ

Համոզվեք, որ ողջ անձնակազմը վերապատրաստվել է գործիքի ճիշտ գործարկման և անվտանգության ցանկացած հնարավոր նկատառումների համար:



Հետևեք գործարկման բոլոր հրահանգներին՝ այս պիտակով նշված բոլոր տարածքներում աշխատելիս, որպեսզի նվազեցնեք աշխատակիցներին կամ գործիքին առնչվող ռիսկերը:

Էլեկտրական անվտանգության զգուշացումներ

Մի հեռացրեք արտաքին վահանակները գործիքի վրայից: Ներսում օգտվողի օգտագործման համար պիտանի մասեր չկան: Առանց որևէ վահանակի գործիքի գործարկումն առաջացնում է հնարավոր ազդեցություն գծի լարման և հաստատուն հոսանքի լարումների վրա:



Գործիքը սնուցվում է 100–240 վոլտ հոսանքով, փոփոխական հոսանքի 50/60 Հց աշխատանքի պայմաններում: Լարման վտանգավոր աղբյուրները տեղակայված են հետևի և կողային վահանակների հետևում, սակայն հասանելի են մյուս վահանակների հեռացման դեպքում: Գործիքը գտնվում է որոշ լարման տակ, անգամ երբ այն անջատված է: Գործարկեք գործիքը, երբ բոլոր վահանակներն առկա են, որպեսզի խուսափեք Էլեկտրահարումից:

Հոսանքի բնութագրեր

Տեսակ	Բնութագիր
Գծի լարումը	100–240 VAC 50/60 Հց-ով
Հոսանքի առավելագույն ծախս	80 Վատտ

Պահանջվում է հոսանքի հողանցում: Եթե լարման տատանումը 10%-ից ավելին է, ապա պահանջվում է գծի կարգավորիչ:

Հոսանքի լարի հասանելիություն

Տեղադրեք գործիքն այնպես, որպեսզի կարողանաք արագորեն անջատել հոսանքի լարը սնուցման վարդակից:

Պաշտպանիչ հողանցում



Գործիքն ունի միացում պաշտպանիչ հողանցմանը պատյանի միջոցով: Հոսանքի լարի անվտանգության մակերեսը միանում է պաշտպանիչ հողանցմանն անվտանգ հղումով: Այս սարքն օգտագործելիս հոսանքի լարի պաշտպանիչ հողանցման միացումը պետք է լինի նորմալ աշխատանքային կարգավիճակում:

Ապահովիչներ

Հոսանքի մուտքի մոդուլը ներառում է բարձր լարման մուտքային գծերի վրա երկու մուտքային ապահովիչներ: Ապահովիչները 5 մմ × 20 մմ չափերի են և գնահատված են 10 Ամպեր, 250 VAC, դանդաղ պայթյունի:

Տաք մակերեսների անվտանգության զգուշացումներ

Մի գործարկեք գործիքը վահանակներից որևէ մեկի բացակայության դեպքում:

Շրջակա միջավայրի պահպանման նկատառումներ

Տարր	Բնութագիր
Ջերմաստիճան	Պահպանեք 15°C-ից 30°C (22.5°C ±7.5°C) ջերմաստիճան լաբորատորիայում: Գործարկման ժամանակ թույլ մի տվեք շրջակա ջերմաստիճանի տատանում ±2°C-ից ավելի:
Խոնավություն	Պահպանեք առանց խտացման հարաբերական խոնավություն 20–80% միջակայքում:
Բարձրացում	Տեղադրեք գործիքը 2000 մետր (6500 ոտնաչափ) բարձրությունից ցածր հարթակի վրա:
Օդի որակ	Շահագործեք սարքը փակ միջավայրում: Պահպանեք օդի մասնիկների մաքրության մակարդակը համաձայն ISO 9-ի (սովորական սենյակային օդ) կամ ավելի լավը:
Թրթռոց	Շրջակայքում թրթռոցի մակարդակը պետք է առնվազն համապատասխանի ISO office ստանդարտում նշված մակարդակին:

Համապատասխանության և կարգավորիչ նշումներ

Գործիքը պիտակավորված է հետևյալ համապատասխանության և կարգավորիչ նշումներով:

Վտանգավոր նյութերի սահմանափակում (RoHS)



Այս պիտակը նշանակում է, որ գործիքը համապատասխանում է թափոնների WEEE Հրահանգին:

Հետևեք

support.illumina.com/certificates.html

հղմանը՝ ձեր սարքի վերամշակման ուղեցույցների համար:

Արտադրանքի համապատասխանության և կարգավորիչ հայտարարություններ

Արտադրանքի վկայագրեր և համապատասխանություն

iSeq 100 համակարգը համապատասխանում է հետևյալ հրահանգներին՝

- ▶ EMC 2014/30/EU
- ▶ Ցածր լարման 2014/35/EU
- ▶ Ռադիոսարքավորում 2014/53/EU

ԵՄ Համապատասխանության և վկայագրերի ամբողջական հայտարարությունները հասանելի են Illumina-ի կայքում՝ support.illumina.com/certificates.html հղումով:

Ռադիոհաճախականության ազդեցությունը մարդկանց վրա

Այս սարքը համապատասխանում է ընդհանուր բնակչության համար առավելագույն թույլատրելի ազդեցության (MPE) սահմանաչափերին՝ համաձայն Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 47-րդ բաժնի § 1.1310 Աղյուսակ 1-ի:

Այս սարքը համապատասխանում է մարդկանց վրա Էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության (ԷՄԴ-ներ) սահմանաչափերին այն սարքերի համար, որոնք աշխատում են 0 Հց-ից մինչև 10 ԳՀց հաճախականության միջակայքում, որոնք օգտագործվում են ռադիոյի հաճախականության նույնականացման մեջ (RFID) և 2,4 ԳՀց և 5 ԳՀց հաճախականությամբ հաղորդիչների աշխատանքային կամ մասնագիտական միջավայրում: (EN 50364:2010 բաժիններ 4.0, EN 62311:2008, EN 62479:2010):

Այս սարքը պետք է տեղադրվի և գործարկվի ռադիատորի և ձեր մարմնի միջև նվազագույնը 20 սմ (8 դյմ) հեռավորության վրա:

RFID համապատասխանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տեսե՛ք՝ *RFID Ընթերցիչի համապատասխանության ուղեցույց (փաստաթղթի համարը՝ 100000002699)* support.illumina.com/downloads/rfid-reader-compliance-guide-100000002699.html հղումով:

Եվրոպական չափանիշներին համապատասխանություն (CE նշում)

Սարքը նախատեսված է միայն փակ տարածքում գործարկման համար, երբ կիրառվում է 5150-ից 5350 ՄՀց հաճախականություն:

ԵՄ-ում հաճախականությունը, ռեժիմը և առավելագույն փոխանցվող հոսանքը նշված են ստորև՝

- ▶ 2412–2472 ՄՀց (802.11g6Մբիթ/վ): 19,98 դԲ/մՎտ
- ▶ 2402–2480 ՄՀց (EDR 3Մբիթ/վ): 9,65 դԲ/մՎտ
- ▶ 2402–2480 ՄՀց (LE 1Մբիթ/վ): 9,80 դԲ/մՎտ
- ▶ 5180–5240/ 5260–5320/5500–5700 ՄՀց (802.11acVHT40 MCS0/NSS1): 22,95 դԲ/մՎտ

ԷՄՐ նկատառումներ

Այս սարքը մշակվել և փորձարկվել է CISPR 11 Դաս Ա ստանդարտի համաձայն: Տնային պայմաններում այն կարող է առաջացնել ռադիոխանգարումներ: Ռադիոխանգարումների ի հայտ գալու դեպքում, անհրաժեշտ է մեղմացնել դրանք:

Մի օգտագործեք սարքն անմիջապես ուժեղ էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների մոտ, քանի որ կարող է խանգարել պատշաճ շահագործմանը:

Նախքան սարքը գործարկելը, գնահատեք էլեկտրամագնիսական միջավայրը:

Փոփոխությունների պատմություն

Փաստաթուղթ	Ամսաթիվ	Փոփոխության նկարագրություն
Փաստաթղթի համարը՝ 1000000035336 v00	Հունվար 2018	Սկզբնական թողարկում:

Չեղինակային իրավունքներ և ապրանքային նշաններ

© 2018 Illumina, Inc.: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Բոլոր ապրանքային նշանները հանդիսանում են Illumina, Inc.-ի սեփականությունը կամ դրանց համապատասխան սեփականատերերինը: Ապրանքային նշանների վերաբերյալ որոշակի տեղեկությունների համար այցելեք www.illumina.com/company/legal.html հղումով: